

ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար՝
Պրն. ՅԵՆՍ ՍՏՈԼՏԵՆԲԵՐԳԻՆ,

ՆԱՏՕ-ի անդամ պետությունների արտաքին գերատեսչություններին՝

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարություն
Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղարություն
Հունաստանի արտաքին գործերի նախարարություն
Բուլղարիայի արտաքին գործերի նախարարություն
Ալբանիայի արտաքին գործերի նախարարություն
Բելգիայի արտաքին գործերի նախարարություն
Կանադայի արտաքին գործերի նախարարություն
Խորվաթիայի արտաքին գործերի նախարարություն
Չեխիայի արտաքին գործերի նախարարություն
Դանիայի արտաքին գործերի նախարարություն
Էստոնիայի արտաքին գործերի նախարարություն
Եվրոպական Միության Եվրոպական արտաքին
գործողությունների ծառայություն
Գերմանիայի արտաքին գործերի նախարարություն
Իսլանդիայի արտաքին գործերի նախարարություն
Իտալիայի արտաքին գործերի նախարարություն
Լատվիայի արտաքին գործերի նախարարություն
Լիտվայի արտաքին գործերի նախարարություն
Չեռնոգորիայի արտաքին գործերի նախարարություն
Լյուքսեմբուրգի արտաքին գործերի նախարարություն
Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարություն
Հյուսիսային Մակեդոնիայի արտաքին գործերի նախարարություն
Նորվեգիայի արտաքին գործերի նախարարություն
Լեհաստանի արտաքին գործերի նախարարություն
Պորտուգալիայի արտաքին գործերի նախարարություն
Ռումինիայի արտաքին գործերի նախարարություն
Սլովակիայի արտաքին գործերի նախարարություն
Սլովենիայի արտաքին գործերի նախարարություն
Իսպանիայի արտաքին գործերի նախարարություն
Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի, համագործակցության
և զարգացման գրասենյակ

Նամակ Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպություններից

2020թ. հոկտեմբերի 14-ին մի շարք քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
դիմել էին Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ
ներկայացուցիչ Ջեյմս Ապատուրային, ՆԱՏՕ-ի Բյուրսելում Կովկասի պատասխանատու Դեսպինա
Աֆենտուլինին, Վրաստանում ՆԱՏՕ-ի գրասենյակի ղեկավար Ռոզարիա Պուգլիսին եւ Հայաստանում

ՆԱՏՕ-ի անդամ երկրների դեսպանություններին՝ կանխելու ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի կողմից Լեռնային Ղարաբաղի հակամարտության ռազմական սրացմանն ուղղված գործողությունները:¹

Մասնավորապես՝ տվյալ նամակով տեղեկացրել ենք, որ Թուրքիայի աջակցությամբ և միջնորդությամբ Սիրիայից Ադրբեջան են ուղարկվել հազարավոր վարձկաններ, այդ թվում՝ միջազգային հանրությանը հայտնի ահաբեկչական միավորումների զինյալներ՝ անմիջականորեն մասնակցելու էթնիկ հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղի դեմ իրականացվող ռազմական գործողություններին: Այս տեղեկությունները բացահայտվել են ինչպես մի շարք լրատվամիջոցների հետաքննությունների արդյունքում², այնպես էլ հաստատվել են բազմաթիվ պետությունների՝ ներառյալ Ֆրանսիայի³, Ռուսաստանի Դաշնության⁴, Իրանի Իսլամական Հանրապետության⁵, Սիրիայի Արաբական Հանրապետության⁶, ինչպես նաև ԱՄՆ⁷, Եվրոպական խորհրդարանի⁸ և ՄԹ⁹ պաշտոնատար անձանց կողմից: Ի լրումն՝ համացանցում արդեն իսկ հայտնվել են բազմաթիվ տեսանյութեր, որոնք վկայում են վարձկանների, այդ թվում՝ ահաբեկիչների, ներգրավումը պատերազմական գործողություններին:¹⁰

Բացի վարձկան ահաբեկիչների ներգրավումից, միջազգային առաջատար իրավապաշտպան կազմակերպություններն ահազանգում են, որ Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչության դեմ կիրառվում են միջազգային մարդասիրական

¹ Կանխել ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի կողմից Ղարաբաղյան հակամարտության ռազմական էսկալացիային ուղղված գործողությունները, Դիմում, <https://hcaav.am/nato-urgent-appeal-from-armenian-csos/>

² <https://investigativejournal.org/turkeys-syrian-mercenaries-in-azerbaijan-feel-tricked-as-bodies-pile-up/>; <https://www.theguardian.com/world/2020/oct/02/syrian-recruit-describes-role-of-foreign-fighters-in-nagorno-karabakh>; <https://www.foxnews.com/world/are-syrian-rebels-dying-azerbaijan-armenian-conflict>; <https://www.independent.co.uk/news/world/middle-east/armenia-azerbaijan-syria-war-fighting-mercenary-russia-b912446.html>; <https://www.fr24news.com/a/2020/10/france-accuses-turkey-of-sending-syrian-mercenaries-tonagorno-karabakh-2.html>; <https://www.themoscowtimes.com/2020/09/30/russia-says-syrialibya-fighters-deployed-to-karabakh-conflict-a71610>; <https://www.reuters.com/article/us-armeniaazerbaijan-putin-macron/france-accuses-turkey-of-sending-syrian-mercenaries-to-nagorno-karabakhidUSKBN26L3SB>; <https://www.reuters.com/article/armenia-azerbaijan-int/assad-blames-turkey-for-nagornokarabakh-fighting-russia-sees-terrorism-risk-idUSKBN26R1DZ>; <https://www.jpost.com/breaking-news/mercenaries-from-syria-being-deployed-in-nagorno-karabakh-assad644705>; <https://www.rfi.fr/en/international/20201001-macron-claims-syrian-jihadists-active-inconflict-between-armenia-and-azerbaijan-nagorno-karabakh>; <https://www.bbc.com/news/world-europe54366616>; Middle East Monitor, <https://www.independent.co.uk/news/france-fears-turkey-sending-mercenaries-caucasusturkey-emmanuel-macron-nagornokarabakh-vladimir-putin-azerbaijan-b738440.html>;

³ Է. Մակրոն, https://www.youtube.com/watch?v=OCQqW1A5kuM&feature=emb_logo; <https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan-putin-macron/france-accuses-turkey-of-sending-syrianmercenaries-to-nagorno-karabakh-idUSKBN26L3SB>

⁴ Ս. Լավրով, <https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan-putin-macron/france-accuses-turkey-ofsending-syrian-mercenaries-to-nagorno-karabakh-idUSKBN26L3SB>; S.Narishkin <http://www.svr.gov.ru/smi/2020/10/o-situatsii-vokrug-nagornogo-karabakha.htm>

⁵ Հ. Ռոհանի, <http://www.president.ir/en/117707>; S.Khatibzadeh, <https://bit.ly/211CQca>

⁶ Բ. Սուսո, <https://www.youtube.com/watch?v=LgwonSjMlpw>; <https://www.reuters.com/article/armeniaazerbaijan-syria-assad-int-idUSKBN26R0V6>

⁷ ԱՄՆ կոնգրեսական Ա.Շիֆ, <https://www.facebook.com/watch/?ref=external&v=831208917617724>; D.Titus, <https://twitter.com/repdinatitus/status/1310636287918067716>; B.Sherman, <https://twitter.com/BradSherman/status/1310335797799813122>; J.Chu, https://anca.org/press-release/membersof-congress-blast-azerbaijan-and-turkey-as-attack-on-artsakh-expands-toarmenia/?fbclid=IwAR2DrUCNcNW1c38HNr11yYDRDclK8ivhj7x1rPRZ94GcFmeIc00GrI3_5-I

⁸ European Parliament Plenary Session, <https://hetq.am/en/article/122709?fbclid=IwAR06a1e1mg9PQj4MWcfRc1aDqWK3ePwOqvY9YpG1nZnouGzDnhA8aPXgg>

⁹ UK Members of All-Party Parliamentary Group for Armenia, <https://en.armradio.am/2020/10/06/uk-mpscondemn-azerbaijani-attack-against-artsakh-and-armenia/>

¹⁰ Syrian Mercenaries in NK: Who they are, what they are doing, and where they have been noticed, https://citeam.org/syrian-mercenaries-in-nkr.html?fbclid=IwAR0aQlTHu_ZfOAXQ-qwZHesN6SJuljnQa70VEkDi2WTP22ou2SMJQ-6KTCk

իրավունքով արգելված զինամթերք, այդ թվում՝ կասետային ռումբեր, բալիստիկ հրթիռներ¹¹, տեղի են ունենում պատերազմական հանցագործություններ, որոնք վերլուծվել և հաստատվել են նաև միջազգային լրատվամիջոցների կողմից: Օրինակ՝ հայ ռազմագերիների նկատմամբ նվաստացումներ, խոշտանգումներ և սպանություն¹², սպանված զինծառայողների դիակների փոխանակման մերժում հրադադարի հաստատումից հետո և այլն: Ավելին՝ չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երեք պետությունների նախագահների կողմից միջնորդած և կնքված երեք հրադադարների հաստատմանը՝ Թուրքիայի բարձրագույն ղեկավարությունը յուրաքանչյուր դեպքով խրախուսել է Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների վերսկսումը Լեռնային Ղարաբաղի դեմ, անմիջական պատասխանատվություն վերցնելով նաև հրադադարի ռեժիմի հաստատման խոչընդոտմանը:

Չնայած վերոնշյալ հանցագործությունների և խախտումների ներկայացմանը՝ մինչ օրս հասարակական կազմակերպությունների դիմումի վերաբերյալ ՆԱՏՕ-ից և ՆԱՏՕ-ի անդամ որևէ պետության կողմից որևէ արձագանք չենք ստացել, չի ներկայացվել դաշինքի դիրքորոշումը իր անդամ Թուրքիայի գործողությունների վերաբերյալ:

Մենք գտնում ենք, որ ՆԱՏՕ-ն, հանդիսանալով միջազգային ահաբեկչության դեմ պայքարող ռազմաքաղաքական կառույց, պարտավոր է գործուն քայլեր ձեռնարկել կանխելու հետագա ահաբեկչական գործողությունները, ահաբեկչական միավորումների տեղակայումը Հարավային Կովկասում և ընդհանրապես ողջ տարածաշրջանում:

Հյուսիսատլանտյան դաշնագրի համաձայն՝ Միավորված ազգերի կանոնադրությամբ նախատեսված՝ կողմերը պարտավորվում են ցանկացած միջազգային հակամարտություն լուծել խաղաղ ճանապարհով՝ չվտանգելով միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, ինչպես նաև արդարությունը:¹³ Կողմերը պարտավորվում են նաև իրենց միջազգային հարաբերություններում զերծ մնալ սպառնալիքների կամ ուժի այնպիսի կիրառումից, որը հակասում է Միավորված ազգերի նպատակին: Հայաստանը՝ որպես Համագործակցություն հանուն խաղաղության ծրագրի շրջանակներում ՆԱՏՕ-ի ակտիվ գործընկեր, համագործակցում է ՆԱՏՕ-ի հետ պաշտպանության ոլորտում՝ Աֆղանստանում և Կոսովոյում, և քաղաքականության ու անվտանգության ոլորտներում՝ Ժողովրդավարության չափանիշներ, իրավունքի գերակայություն և կոռուպցիայի դեմ պայքար:¹⁴ Այս լույսի ներքո՝ ՆԱՏՕ-ի դաշնակցի կողմից ՆԱՏՕ-ի գործընկեր պետության նկատմամբ, ինչպես նաև մեկ գործընկեր պետության (Ադրբեջանի) կողմից մեկ այլ գործընկեր պետության (Հայաստանի) նկատմամբ ռազմական գործողությունը խարխուլում են ՆԱՏՕ-ի հանուն խաղաղության համագործակցության ոգին և ՆԱՏՕ-ի դիրքորոշումը՝ խրախուսելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո:

Քաղաքացիական հասարակությունը մտահոգություն է հայտնում, որ ՆԱՏՕ-ի և նրա անդամ պետությունները Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի անդամ, իրենց գործընկեր պետության Թուրքիայի կողմից ձեռնարկվող ահաբեկիչների ներգրավման, և ահաբեկչության ծավալմանն ուղղված գործողությունների կանխման, կասեցման ուղղությամբ որևէ միջոցներ չեն ձեռնարկել, որը կարող է

¹¹ HRW: https://www.hrw.org/news/2020/10/23/azerbaijan-cluster-munitions-used-nagorno-karabakh?fbclid=IwAR2ux8LzqP11Unu0R2iv4aj0I927zHnj1d9Fs-rh-EkF8QTIyA0jXjGbP_c; ICRC: <https://www.icrc.org/en/document/nagorno-karabakh-conflict-civilians-bearing-brunt-surge-violence>

¹² BBC: <https://www.bbc.com/news/world-europe-54645254>

¹³ https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_17120.htm?selectedLocale=hy

դիտարկվել անգործություն և անտարբերություն Հյուսիսատլանտյան դաշինքի հիմնարար սկզբունքների պահպանման նկատմամբ:

Ակնկալում ենք, որ անհրաժեշտ միջոցառումներ այնուամենայնիվ կձեռնարկվեն ՆԱՏՕ-ի անդամ պետությունների կողմից, ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար պրն. Ստոլտենբերգի կողմից Բրյուսելում ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի հետ հանդիպման ընթացքում հրադարձի ռեժիմի շարունակվող խախտումների և դրանց հետևանքով մարդկային կորուստների վերաբերյալ հայտնած մտահոգություններից կոնկրետ և իրական գործողություններ, քայլեր կատարելու ուղղությամբ:

Ուստի, սույն նամակով վերստին դիմում ենք Ձեզ՝ ՆԱՏՕ-ի անդամ պետություններին, որոնք իրապես շահագրգիռ են լուծելու Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը խաղաղ ճանապարհով, առանց ուժի կիրառման սկզբունքներին համապատասխան, առաջարկելով ՆԱՏՕ կանոնադրության համաձայն՝ ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի օրակարգում հրատապ կարգով քննարկման դնել հետևյալ հարցերը՝

- ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի կողմից Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ուղղակի և անուղղակի կերպով ներգրավման կանխում,

- Թուրքիայի կողմից ահաբեկիչներ վարձելու և Լեռնային Ղարաբաղի դեմ իրականացվող ռազմական գործողություններին ներգրավելու բացառում,

- Թուրքիայի աջակցությամբ իրականացվող ռազմական գործողություններում պատերազմական հանցագործությունների օբյեկտիվ քննության անցկացում և կանխարգելման ուղղությամբ գործուն քայլերի ձեռնարկում:

Ստորագրյալներ՝

1. Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
2. Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն
3. Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
4. Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների
5. Բաց հասարակության հիմնադրամ Հայաստան
6. Իրավունքի Չարգացման և Պաշտպանության Հիմնադրամ
7. Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն
8. Հանրային լրագրության ակումբ
9. Իրավական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ
10. ՄԱԿ-ի հայկական ասոցիացիա
11. Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե
12. Համայնքների ֆինանսիստների միավորում
13. «Խաղաղության երկխոսություն» ՀԿ
14. «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ
15. «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ
16. Իրավունքի զարգացման կենտրոն ՀԿ
17. Քաղաքականության հետազոտական կենտրոն
18. «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

19. «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ
20. Հոգեուռուցքաբանության հայկական ասոցիացիա
21. Ազգային ջրային համագործակցություն ՀԿ
22. «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ
23. Ազատ քաղաքացի ՔՆԱԿ ՀԿ
24. Քվիր քուր պլատֆորմ ՀԿ
25. Հասարակություն Առանց Բռնության ՀԿ
26. «Արծվաբույն Ձեյթուն» հայրենակցական միություն
27. Մեռական բռնության ճգնաժամային կենտրոն ՀԿ
28. AEGEE-Երևան/Եվրոպական Ուսանողների Ֆորում
29. Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
30. Իրական Աշխարհ Իրական Մարդիկ ՀԿ
31. Սոցիոսկոպ ՀԿ
32. «Կանանց Ֆորում» ՀԿ
33. Հայաստանի Հելսինկյան կոմիտե
34. Ուրբան կայուն զարգացման հիմնադրամ
35. Սպառողների աջակցման կենտրոն ՀԿ
36. «Շողեր միություն» սոցիալ-կրթական ՀԿ
37. «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն ՀԿ
38. Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն
39. Սոցիալական և երիտասարդական աշխատողներ
40. Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն ՀԿ
41. ԲԻԹՈՒԷՍ հայկական սոցիալական ձեռնարկատիրության ասոցիացիա ՀԿ
42. Երիտասարդական ակումբների դաշնություն
43. «Իրավունքի ուժ» ՀԿ
44. Մարդու իրավունքների տուն Երևան
45. Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն
46. Տաթևիկ ՀԿ
47. Իրազեկ քաղաքացիների միավորում